ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» հոկտեմբերի 2021թ. **N ----- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԱՐՏՅՈՒՇԱ ՀԱԿՈԲԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ
«ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի 2803-րդ տարեդարձի առթիվ, Երևան քաղաքի պարարվեստի զարգացման գործում ներդրած նշանակալի ավանդի և ունեցած հաջողությունների համար պարուսույց, ՀՀ ժողովրդական արտիստ Արտյուշա Հակոբի Կարապետյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՐՏՅՈՒՇԱ ՀԱԿՈԲԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Արտյուշա Հակոբի Կարապետյանը ծնվել է 1928 թվականի ապրիլի 18-ին, Երևանում:

1934-1943թթ. սովորել և ավարտել է Մաքսիմ Գորկու անվան դպրոցը:

1943թ. ընդունվել է Հայաստանի վաստակավոր կոլեկտիվ երգի-պարի պետական անսամբլ, որպես մենակատար պարող:

1954-1957թթ. եղել է Հայֆիլհարմոնիայի Լ.Կ.Ե.Մ. սկզբնական կազմակերպության առաջին քարտուղար, պարտիական բյուրոյի անդամ, երգի-պարի անսամբլի կուսակցական խմբի քարտուղար, արհմիութենական տեղային կոմիտեի նախագահի տեղակալ, երգի-պարի անսամբլի արհմիութենական ցեխային կազմակերպության նախագահ:

1960-1970թթ. ղեկավարել է Հայաստանի երգի-պարի պետական անսամբլի պարային մասը:

1970-1974թթ. եղել է Հայաստանի ժողովրդական ստեղծագործության տան պարարվեստի բաժնի վարիչը:

1977-1980թթ. աշխատել է Երևանի քաղաքային սովետի գործկոմի կուլտուրայի բաժնի հ.14 կուլտուրայի տանը, որպես պարային անսամբլի ղեկավար:

1979-1988թթ. եղել է Հայաստանի ժողովրդական ստեղծագործության և կուլտուր-լուսավորչական աշխատանքի հանրապետական գիտամեթոդական կենտրոնի պարարվեստի բաժնի բալետմայստեր-գիտաշխատող:

1988թ. մինչ այսօր հանդիսանում է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պարարվեստի ամբիոնի «Հայկական ժողովրդական պար» և «Բալետմայստերի վարպետություն» առարկաների ավագ դասախոս:

Արտյուշա Կարապետյանը հավաքագրել և մշակման է ենթարկել ավելի քան 200 ժողովրդական պարանմուշներ:

1965թ. արժանացել է ՀԽՍՀ վաստակավոր արտիստի պատվավոր կոչմանը, 2013թ.՝ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալի, 2017թ.՝ ՀՀ ժողովրդական արտիստի պատվավոր կոչմանը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով պարուսույց, ՀՀ ժողովրդական արտիստ Արտյուշա Կարապետյանի ներդրած ավանդը և ունեցած հաջողությունները Երևան քաղաքի պարարվեստի զարգացման գործում՝ առաջարկվում է Արտյուշա Հակոբի Կարապետյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում և Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՐՏՅՈՒՇԱ ՀԱԿՈԲԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Արտյուշա Հակոբի Կարապետյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում։

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՐՏՅՈՒՇԱ ՀԱԿՈԲԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Արտյուշա Հակոբի Կարապետյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ